Տ. ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հունվարի 1999 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ժամանակի հոլովույթի մեջ այսօր մեկ անգամ ևս մի պահ կանգ առանք և փորձեցինք կանգնեցնել նաև ժամանակը՝ ևս մեկ անգամ քննելու, վերապրելու, վերարժևորելու համար մեր սրտերում, մեր հոգիներում այն դեպքը, որ տեղի ունեցավ 1999 տարիներ առաջ, Պաղեստինի մի անշուք գյուղաքաղաքում, որ կոչվում է Բեթղեհեմ՝ մեկ անգամ ևս հնչեցնելու համար արդեն երկու հազարամյակ տարբեր լեզուներով հնչող, սակայն երբեք չհնացող, չխամրող ու ականջի համար միշտ քաղցր խոսքերը, թե. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, մեզ եւ ձեզ մեծ աւետիս»:

Այսօր, մթնշաղի այս խորախորհուրդ պահին, մեկ անգամ ևս, իբրև քրիստոնյա հավատավոր մարդիկ, մեր մտքի պաստառի վրա վերականգնեցինք երկու հազար տարիներ առաջ կատարված դեպքը, մտովի պատկերացրինք երկու հոգնած ճամփորդների՝ ծերունազարդ, սպիտակահեր անձնավորությանը և դեռատի նորահարսին, որ իր հղիության վերջին ժամերն էր ապրում: Նրանք անցել էին Հրեաստանի հյուսիսից հարավ, անցել էին երբեմն փոշոտ, երբեմն ցեխոտ ճանապարհներով: Նրանք կրում էին իրենց վրա ճանապարհի հոգնությունն ու նեղությունը, և, այդքանից հետո անգամ, ինչպես վկայում է Ավետարանը, նրանց համար իջևանատանը տեղ չգտնվեց: Նրանք գիշերեցին իջևանատան մերձակա քարայրում, որը ծառայում էր իբրև ախոռ անասունների համար: Այնտեղ, ում Մարիամն այդ վատ պայմաններում ունեցավ այն մանկանը, որ կոչվելու էր Քրիստոս:

Դարեր շարունակ արվեստագետները՝ նկարիչներ, քանդակագործներ, փորձել են պատկերել այդ տեսարանը՝ խոնարհ գոմի մեջ խանձարուրով պատված մանկանը և նրա վրա խոնարհված Աստվածամորը: Գիտենք, սակայն, վստահ ենք, որ այդ պատկերներից առավել և այդ պատկերներից դուրս, իրապես, Հիսուս մանկան ծնունդը համեստ և ավելի քան խոնարհ պայմաններում տեղի ունեցավ: Մենք, իբրև քրիստոնյաներ, ամեն անգամ ցնծալով Քրիստոսի ծննդյան լույս ավետիսով, միևնույն ժամանակ սրտի դողով ու սարսուռով ենք մոտենում այս անմեկնելի խորհրդին, որ տեղի է ունենում Աստծո խոնարհումով:

Բեթղեհեմից ընդամենը մի քանի մղոն այն կողմ Հերովդեսի հռչակավոր և մեծահրաշ ապարանքն էր, որտեղից մշտապես լսվում էին խրախճանքի և ուրախության ձայներ, ուր ամեն բան պատված էր բեհեզով, սակայն Աստծո

Որդին ծնվեց գոմում, դրվեց մսուրի մեջ և տաքացավ անասունների շնչով: Ամեն անգամ, այս անմեկնելի խորհրդի առջև ծնկի եկած, փորձում ենք հասկանալ և այդ հրաշք եղելությունը բացատրում ենք միայն և միայն Աստծո խոնարհումով ու Աստծո խոնարհության սքանչելի դրսևորումով, քանզի Աստված չի գործում այնպես, ինչպես մարդիկ կկամենային կամ կգործեին, եթե ունենային հարստություն, ուժ և իշխանություն: Գիտենք, թե պատմության ընթացքում մեծահարուստների, արքաների, կայսրերի որդիները երբ ծնվում էին, ինչպիսի խրախճանքներ, ինչպիսի աղմուկ-աղաղակ էր լինում, սակայն այսօր Աստծո Որդին է ծնվում. ու այդ մասին ոչ ոք չգիտի: Լռում են թմբուկները հռոմեական կայսրության: Աստծո Որդու ծննդյան մասին, Տիրոջ միջամտությամբ ու միջնորդությամբ, իմանում են հովիվներն ու երեք մոգեր, ովքեր գալիս են երկրպագելու մանկանը՝ նրա մեջ տեսնելով Աստծո իրական մարդացումը: Աստծո խոնարհումով տրված նորահրաշ այս մանուկը իրապես պետք է թագավորեր աշխարհի վրա ոչ թե ժամանակի ընթացքում, այլ ժամանակից դուրս, ոչ թե տարածության մեջ, այլ տարածությունից դուրս և տարածության վրա: Իր գահը, որ սկսվեց մսուրով, իր վերջը պիտի գտներ Գողգոթայի բարձունքին՝ որպես մի խաչ, որպես անարգանքի մի գործիք, որը հետո պետք է դառնար հարության նշան և խորհրդանիշ:

Ծնվում է Աստծո Որդին ողջ արարչագործության ու տիեզերքի պատմության մեջ մեկ և միակ անգամ, սակայն բնությունը չի խաթարվում այդ իրողությունից, գետերը չեն փոխում իրենց ընթացքը, երկրաշարժեր տեղի չեն ունենում, արևը չի խավարում, լուսինը շարունակում է լուսավորել, մարդիկ զբաղվում են իրենց առօրյա գործերով ու հոգսերով, որովհետև Աստված գործում է անաղմուկ, գործում է ոչ թե ցույց տալու համար, փառավորելու, Իրեն Տեր և Թագավոր ներկայացնելու համար, այլ գործում է, քանզի Աստված է և Արարիչ, Հայր և խնամակալ ամենքի: Աստված գործում է լուռ, անաղմուկ, և Աստծո գործունեությունը կարելի է տեսնել լույսի առկայծման ու ծայնի սոսափյունի մեջ: Հիշենք Եղիա մարգարեի դրվագը, երբ նա սպասում էր Աստծուն, ու հանկարծ հողմ է բարձրանում, սակայն Աստված հողմի մեջ չէր, երկրաշարժ է տեղի ունենում, կրակ և հուր է ժայթքում, սակայն Աստված այնտեղ չէր, ապա Աստված Եղիային երևում է մեղմ հովի սոսափյունի մեջ: Նույնպես և այստեղ Աստված մեր սրտերում, մեր հոգիներում մարդանում է նա մեկ անգամ, ինչպես 1999 տարիներ առաջ, այսօր նա գործում է անաղմուկ, գործում է լուռ, ինչպես վայել է Աստծուն, վայել է Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Արդյո՞ք Որդին մարդանում է սոսկ իբրև խոնարհության նշան՝ ցույց տալու համար, որ Ինքը, իբրև Տեր և Թագավոր, ունի այն կարողությունն ու զորությունը, որը կարող է Իրեն մղել նման խոնարհության: Անշուշտ ոչ միայն այդ բանի համար Քրիստոս մարդացավ: Քրիստոս մարդանում է մեր և ձեր համար, ինչպես Իրեն նախորդող սերունդների, այնպես էլ՝ հաջորդների համար: Ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ «*Նա եկավ, որպեսզի մենք ուրանանք ամբարշտությունը և աշխարհական ցանկությունները*» (Տիտոս Բ 12):

Քրիստոս Իր խոնարհությամբ, մարդեղությամբ իրապես ցույց տվեց թե՛ ամբարշտության և թե՛ աշխարհական ցանկությունների մահը: Ինչպես Առաքյալն է շարունակում, «կարողանանք ապրել զգաստ, արդար ու աստվա-

ծապաշտ»: Լինենք զգաստ, որպեսզի մեր մեջ երբեք տեղ չգտնի մեղքը՝ նախանձը, ատելությունը և այն ամենը, ինչ մարդուն հեռացնում է Աստծուց: Լինենք արդար՝ հասկանալու համար, թե իրապես ինչն է պատկանում Աստծուն և ինչը՝ մարդուն, որպեսզի կարողանանք Աստծունը տալ Աստծուն և մարդունը՝ մարդուն: Լինենք աստվածապաշտ, քանզի այս տիեզերքը ստեղծված է իբրև փառաբանություն Արարչին, իբրև աստվածապաշտության սքանչելի մի արտահայտություն: Եթե երկինքն ու երկիրն անդադար փառաբանում են Աստծուն, ապա մարդը, իբրև արարչագործության թագն ու պսակը, իբրև փոքրիկ մի տիեզերք, նույնպես պետք է փառաբանի Նրան:

Սիրելի՝ եղբայրներ և քույրեր, երբեք հնարավոր չէ վերջակետել Հիսուսի ծննդյան հետ կապված մտածումներն ու խորհրդածումները: 2000 տարի շարունակ մարդիկ խորհել, մտածել և փորձել են բացատրել անմեկնելին: Այսօր մենք ենք փորձում մոտենալ ու ըմպել այդ անսերծենալի բաժակից, այդ կփորձեն նաև մեր հաջորդ սերունդները, սակայն մեկ բան ճիշտ է և հավիտենական. այն, որ իրապես ժամանակի լրումին Աստված մարդացավ, որ իրապես Քրիստոս ծնվեց և հայտնվեց, և մենք, որպես այդ իրողության ժառանգորդներ, բազմիցս իրավացի ենք, երբ մեկս մյուսին դիմում ենք պարզ ու գեղեցիկ այս խոսքով. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, մեզ եւ ձեզ մեծ աւետիս». ամեն: